

Լեզվաբանություն և բանասիրություն

Աննա Կուբանյան

*Երևանի պետական համալսարանի Եվրոպական լեզուների և
հաղորդակցության ֆակուլտետի Ռոմանական քանասիրության
ամբիոնի դոցենտ, քանասիրական գիտությունների թեկնածու*

Էլ. հասցե՝ annakubanian@ysu.am

DOI: 10.53614/18294952-2024.1-139

ԳԼՈՒԽ ԲԱՂԱԳՐԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ (ԻՍՊԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Սույն հոդվածում քննվում են դարձվածքի ըմբռնման և դասակարգման սկզբունքների վերաբերյալ առկա որոշ գիտական մոտեցումներ, որոնք տեսական հիմք են ծառայում տվյալ գիտական աշխատանքի ուսումնասիրության համար: Բացի այդ, քննության են ենթարկվում «գլուխ» բաղադրիչով դարձվածային միավորների փոխակերպման, այն է՝ տարբերակայնության առանձնահատկություններն իսպաներենում՝ հայերենի գուգադրությամբ, ուսումնասիրվում են «գլուխ» բաղադրիչով դարձվածային միավորների տարբերակայնության և հոմանիշության համակարգային կապերը իսպաներենում ու հայերենում, և կատվարում է տվյալ բաղադրիչով դարձվածային միավորների վերլուծություն լեզվի մակարդակում՝ վեր հանելով քննվող երկու լեզուներում դարձվածային տարբերակների միջև առկա նմանություններն ու տարբերությունները: Համակարգային բազմաբնույթ կապերի շնորհիվ վերոնշյալ դարձվածային միավորները համատեքստին հաղորդում են արտահայտչականություն և հուզականություն: Տվյալ աշխատանքն արդիական է, քանի որ առաջին անգամ կատարվել է «գլուխ» բաղադրիչով դարձվածային միավորների համեմատական վերլուծություն՝ գուգադրելով քննվող երկու լեզուներում առկա նմանություններն ու տարբերությունները:

Հիմնաբառեր՝ դարձվածային միավոր, դարձվածային

տարբերակայնություն, հոմանիշություն, բազմիմաստություն, դիպվածային փոխակերպում, դարձվածային տարբերակ:

Ներածություն

Աշխարհի լեզվական պատկերը արտացոլում է օբյեկտիվ աշխարհի իրողությունները, վերջինիս վերաբերյալ դատողությունները, տվյալ լեզվահամայնքի արժեհամակարգը, ազգային մտածելակերպի յուրօրինակությունները և անհատի սուբյեկտիվ վերաբերմունքը, որոնք իրենց անմիջական արտացոլումն են գտնում յուրաքանչյուր լեզվի արտահայտչամիջոցներում, որտեղ դարձվածային միավորները զբաղեցնում են իրենց ուրույն տեղը: Լինելով լեզվի արտահայտչականության կարևորագույն միջոց և լեզվաձևական անհրաժեշտ տարր՝ դարձվածքները հանդես են գալիս բանավոր և գրավոր խոսքի բոլոր ոճերում՝ խոսքը դարձնելով պատկերավոր, կոռ և արտահայտիչ, ինչպես նաև նրան հաղորդում դիպուկություն ու սեղմություն: Որպես լեզվական երևույթ՝ այն հատուկ է բոլոր լեզուներին, սակայն յուրաքանչյուր լեզվում ունի իր ուրույն դրսևորումները:

Դարձվածային միավորները կարելի է քննել ինչպես լեզվի, այնպես էլ խոսքի մակարդակում: Որպես անտարրալուծելի և կայուն միավոր, որը լեզվում բացառում է իր կազմության մեջ մտնող բաղադրիչների ձևախախտումը կամ փոխատեղումը, երբեմն խոսքի մակարդակում ենթարկվում է մի շարք փոփոխությունների, այն է՝ փոխակերպումների, որոնք ձևախախտում են դարձվածքի ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային ամբողջականությունը՝ վերջինիս գործաբանական ներգործությունն ուժգնացնելու նպատակով: Լեզվի մակարդակում ուսումնասիրվում են դարձվածային միավորի վերաիմաստավորման տեսակները, որոնց դեպքում դարձվածքը ենթարկվում է իմաստային վերափոխման, սակայն կառուցվածքային տեսանկյունից մնում է անփոփոխ:

Սույն հոդվածում դարձվածային միավորները քննվում են լեզվի մակարդակում՝ շեշտը դնելով դարձվածքների տարբերակայնության, հոմանիշության և բազմիմաստության համակարգային կապերի վրա՝ որպես իմաստային կառուցվածքի բաղկացուցիչ տարրեր՝ վեր հանելով վերջիններիս տարբերակիչ հատկանիշները իսպաներենում և հայերենում, միաժամանակ պահպանելով դարձվածքի և կառուցվածքային, և՛ իմաստային ամբողջականությունը:

Մեթոդ

Ուսումնասիրության ամեն մի առարկա թելադրում է համապատասխան մեթոդի ընտրություն: Աշխատանքը կատարվել է համաժամանակյա կտրվածքում, հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել է համեմատական-գուգադրական լեզվաբանական մեթոդը:

1. Դարձվածքի ըմբռնման սկզբունքները իսպաներենում և հայերենում

Դարձվածքները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են: Ինչպես նշում է Խ. Բադիկյանը, «որևէ լեզվի դարձվածքները այդ լեզվի աղն ու համեմունքն են, տվյալ լեզուն կրող ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունը» (Բադիկյան, 1986, էջ 68): Դարձվածքներում վառ կերպով արտացոլվում են ժողովրդի բազմադարյա փորձը, նրա առօրեական իմաստությունը, վարքի կաղապարները, բարոյական, գեղագիտական և կրոնական պատկերացումները, հոգեկերտվածքի ու աշխարհայացքի առանձնահատկությունները:

Դարձվածային միավորների տարբերակման չափանիշները, ինչպես նաև վերջիններիս շուրջ ձևավորված կարծիքները չափազանց տարբեր են, երբեմն հակասական և իրարամերժ, որի վառ ապացույց է ծառայում այն փաստը, առ այսօր չկա մեկ միասնական կամ ընդհանուր սահմանում վերջինիս վերաբերյալ: Այդ է հիմնական պատճառը, որ դարձվածքը որպես լեզվական միավոր դեռևս շարունակում է մնալ տարբեր ուսումնասիրությունների առարկա և հաճախ նույնացվում լեզվական այլ միավորների հետ՝ շփման եզրեր գտնելով տարբեր գիտաճյուղերի հետ:

Մասնագիտական գրականության մեջ դարձվածքը հայտնի է որպես երկու և ավելի բաղադրիչներից կազմված լեզվական կայուն, պատրաստի վերարտադրելի կապակցություն, որը բնութագրվում է բաղադրիչների ամբողջական կամ մասնակի իմաստային վերափոխմամբ: Հայ դարձվածաբանները, որպես կանոն, դարձվածքը սահմանում են լայն առումով՝ ներգրավելով վերջինս բնորոշող գրեթե բոլոր էական հատկանիշները՝ բաղադրիչների կայունությունը, վերարտադրելիությունը, վերաիմաստավորվածությունը, բաղադրիչների բառիմաստի թուլացումը: Վերջինիս վառ օրինակ է Պ. Բեդիրյանի սահմանումը, համաձայն որի՝ «դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթազնած» (Բեդիրյան, 1973, էջ 5): Գրեթե նույն կարծիքն է կիսում Խ. Բադիկյանը, որը բնորոշում է դարձվածքը որպես «երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ հասկացություն արտահայտող վերաիմաստավորված և վերարտադրելի կայուն բառակապակցություն» (Բադիկյան, 1986, էջ 89): Բադիկյանն ուսումնասիրում է դարձվածքը նաև այլ լույսի ներքո, դիտարկելով այն որպես ազգամշակութային՝ ազգային առանձնահատկությունները վեր հանող տարր, որը բացահայտում է տվյալ լեզվի լեզվամտածողության ինքնատիպությունը: Ինչպես նշում է Հ. Բադդասարյանը, ամեն մի լեզվի դարձվածային ֆոնդում ներդաշնակորեն միահյուսվում են ազգայինն ու համընդհանուրը: Ամեն մի լեզվում կան դարձվածային (առածային) ընդհանրություններ, մինչդեռ աշխարհի դարձվածային (առածային) պատկերում դրսևորվում են տվյալ ժողովրդի հոգևոր և նյութական կյանքի, ազգային մտածողության արխետիպերի, էթնոհոգեբանության և պատմության առանձնահատկությունները, ազգային կենսափիլիսոփայությունն ու մշակութային կոդերը (Baghdasarián, 2014, էջ 207, Baghdasarián 2021, էջ 149)՝ Նա դիտարկում

է դարձվածքը լեզվամշակութաբանության տեսանկյունից՝ ընդգծելով տվյալ լեզվական միավորի սերտ կապը այդ ժողովրդի մշակույթի և ազգային ստա-ծելակերպի հետ: Իսկ, ինչպես հայտնի է, ոչ բոլոր դարձվածային միավոր-ներն են ազգամշակութային տեղեկույթի կրողներ: Որոշ դարձվածքներ ընդ-հանուր են տարբեր լեզվամշակույթի կրողների համար: Այն է՝ դարձվածք-ներում ազգամշակութային առանձնահատկություններն առավել վառ կերպով արտացոլվում են ազգային ու համընդհանուրի համայնապատկերում:–

Իսպանական դարձվածաբանության շրջանակում դարձվածքը սահմա-նելիս շեշտը մասնավորապես դրվում է դարձվածքի կառուցվածքային կա-յունության և հատկաբանական բնույթի վրա: Օրինակ՝ Խ. Կասարեսը՝ իս-պանական դարձվածաբանության կարկառուն ներկայացուցիչներից մեկը, որն ունի անփոխարինելի ներդրում այս ոլորտում, և որին կարելի է ներկա-յացնել նաև որպես իսպանական դարձվածաբանության հիմնադիր, սահ-մանում է դարձվածքը որպես «երկու և ավելի բաղադրիչներից կազմված կայուն կապակցություն, որն ունի խոսքի մասի գործառություն, և որի մշտա-կան միասնական իմաստը չի բխում իր բաղադրիչների սովորական իմաստ-ների հանրագումարից» (Casares, 1950, էջ 224): Նույնը փաստում են Ֆ. Վա-րելան և Ու. Կուբարտը, որոնք նշում են, որ դարձվածային միավորներ են կոչվում այն բառակապակցությունները, որոնք որոշ ժամանակահատված պահպանում են իրենց կառուցվածքային կայունությունն ու իմաստային ամ-բողջականությունը (Varela y Kubarth, 2004, էջ 9): Ա. Սուլուազան դարձվածք-ների սահմանման հարցում նույնպես մնում է հավատարիմ ավանդական մոտեցմանը և թերևս հարում է Կասարեսի, Վարելայի և Կուբարտի տեսա-կետին՝ դարձվածքի ելակետային դրույթ ընդունելով կառուցվածքային կա-յունությունն ու հատկաբանական բնույթը: Նա դարձվածային միավոր է հա-մարում առնվազն երկու և ավելի բառերից կամ երբեմն նաև ամբողջական նախադասություններից կազմված կապակցությունները, որոնց բաղադրիչ-ները գտնվում կամ գտնվել են որոշակի շարահյուսական հարաբերության մեջ (Zuluaga, 1980, էջ 135): Գլորիա Կորպաս Պաստորը, որը նույնպես մեծ ներդրում ունի իսպանական դարձվածաբանության զարգացման հարցում, իր դասակարգման մեջ առաջարկում է ասույթի, այն է՝ խոսքային ակտի սկզբունքը զուգակցել կայունության (fijación) չափանիշի հետ՝ հարելով ավանդական մոտեցման սկզբունքներին (Corpas Pastor, 1996, էջ 50): Այլ կերպ ասած՝ երկու քննվող լեզուներում դարձվածքի սահմանման վերաբերյալ ձևավորվել է գրեթե նույն կարծիքը, սակայն իսպանական դարձվածաբա-նության շրջանակներում շեշտը մասնավորապես դրվում է դարձվածքի կա-ռուցվածքային կայունության և հատկաբանական բնույթի վրա:

2. Դարձվածային տարբերակի ըմբռնման և դասակարգման սկզբունքները

Ընդունված է կարծել, որ դարձվածային միավորներին, իբրև լեզվական երևույթ, ավելի ներհատուկ է մենիմաստությունը: Բազմիմաստությունը վե-

րագրվում է բառային միավորին, քանի որ տրամաբանորեն անսահմանափակ թվով բառերի ստեղծումը կբարդացներ լեզվի յուրացումը: Սակայն ինչպես բառային միավորներին, այնպես էլ դարձվածքներին բնորոշ են ոչ միայն մենիմաստությունը, այլ նաև բազմիմաստությունը, տարբերակայնությունը, հոմանիշությունը, հականիշությունը, հարանունությունը և համանունությունը, որոնք արտացոլում են նրանց համակարգային հարաբերությունները ինչպես բառային, այնպես էլ դարձվածային մակարդակում:

Դարձվածային տարբերակները լեզվաբանական գրականության մեջ հայտնի են որպես նույնիմաստ դարձվածային միավորներ, որոնք տարբերվում են բազմիմաստներից այն տարբերակիչ հատկանիշով, որ նույն դարձվածքի տարբեր ձևերն են և արտահայտում են միևնույն իմաստը: Տարբերակայնությունը լեզվի անկայունության, ներքին փոփոխության ու շարժի դրսևորումն է, ինչպես նաև վերջինիս պատմական փոփոխության խթաններից մեկը: Դարձվածային տարբերակը լեզվի դարձվածային ֆոնոլի հարստացման կարևոր միջոց է: Ըստ Շանսկոյի՝ «դարձվածային միավորների տարբերակները նրա բառաքերականական տեսակներն են, որոնք նույնն են իրենց իմաստով և իմաստային ձուլվածության աստիճանով» (Шанский, 1985, էջ 50): Համաձայն Սուլուազայի՝ երկու տարբեր դարձվածային միավորներ դարձվածային տարբերակներ են, եթե գտնվում են միևնույն գործառական ոճի սահմաններում, չեն տարբերվում իրենց իմաստներով, ազատ են և անկախ այն համատեքստից, որում կիրառվում են, իրենց կառուցվածքով և բաղադրիչների կազմությամբ մասնակիորեն համընկնում են և կայուն (ֆիքսված) են, այն իմաստով, որ սահմանափակ և կայուն շարքի մաս են կազմում (Zuluaga, 1980, էջ 225):

Հայ լեզվաբան-ռոմանագետ Ա. Նազարյանը դարձվածային տարբերակն ուսումնասիրելիս առանձնացրել է երկու տարբերակիչ հատկանիշ՝ պարտադիր և կամընտրական: Պարտադիրների շարքում են դասվում պատկերի միասնականությունը, նշողական-նշանակողական իմաստի ընդհանրացումը և պատկերի միասնականությունը, իսկ կամընտրականների շարքում են հանդես գալիս լեզվում կատարած գործառույթի և կարգային (բառաքերական) իմաստի համընկնումը, իմաստների քանակի համընկնումը և բառային անփոփոխակի առկայությունը (Назарян, 1987, էջ 225): Նազարյանը, ըստ նշողական-նշանակողական իմաստի ընդհանրության, դարձվածային տարբերակ է համարում նույնիմաստ դարձվածքները, որոնք տարբերվում են իրենց հուզաարտահայտչականությամբ և ոճական երանգավորմամբ (Назарян, 1987, էջ 226): Իսկ ըստ Պ. Բեդիրյանի՝ դարձվածային տարբերակները դարձվածային միացությունների տարատեսակներ են, որոնք նույնական են իրենց իմաստների բնույթով ու քանակով, ոճական ու շարահյուսական գործառույթներով, ուրիշ բառերի հետ կապակցելիությամբ, ունեն բառային ընդհանուր անփոփոխակ՝ մասամբ տարբեր բառային կազմ, կամ էլ տարբերվում են իրենց բառաձևերով կամ շարադասությամբ (Բեդիրյան, 1973, էջ 213):

3. Գարձվածային տարբերակայնության և հոմանիշության տարրորոշումը

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածային տարբերակ հասկացությունը և դարձվածային տարբերակայնությունը դիտարկվում են որպես երկու տարբեր լեզվական իրողություններ, սակայն վերջիններս երբեմն նույնացվում են, քանի որ երկու դեպքում էլ տեղի է ունենում բաղադրիչի փոփոխություն: Նեղ առումով ուսումնասիրելիս գործ ունենք դարձվածային տարբերակի հետ, որի դեպքում տեղի են ունենում հիմնականում բառային կազմի, երբեմն նաև քերականական բնույթի փոփոխություններ, իսկ լայն առումով ուսումնասիրելիս քննվում է դարձվածային տարբերակայնության խնդիրը, որը ենթադրում է փոփոխությունների ավելի լայն շրջանակ և տեղի են ունենում և՛ քերականական, և՛ դիպվածային, և՛ հոմանշային փոփոխություններ (Martínez Marín, 2005, էջ 131): Դիպվածային փոխակերպումները, որոնք լեզվաբանական գրականության մեջ հայտնի են նաև ձևախախտումներ անվամբ, անհատական հեղինակային փոփոխություններ են, որոնք կատարում է հեղինակը համատեքստում դարձվածքի գործաբանական ներգործությունն ուժգնացնելու նպատակով: Իսկ դարձվածային հոմանիշները, ի տարբերություն դարձվածային տարբերակների, հանդես են գալիս որպես լեզվի առանձին և անկախ միավորներ, մինչդեռ դարձվածային տարբերակները միևնույն դարձվածքի տարբեր ձևերն են: Դարձվածային հոմանիշները կառուցվում են տարբեր պատկերների հիման վրա, այսինքն՝ առաջանում են տարբեր աղբյուրներից, իսկ դարձվածային տարբերակները կառուցվում են միևնույն պատկերի հիման վրա: Հոմանիշ դարձվածքների ներքին ձևի բառախմաստային կազմը, որպես կանոն, տարբեր է լինում: Եթե այն համընկնում է կամ գրեթե համընկնում է, ապա տվյալ դարձվածքները այլևս դադարում են հոմանիշներ լինելուց, և գիտակցվում են որպես միևնույն դարձվածքի տարբերակներ:

Ըստ Վ. Պ. Ժուկովի՝ դարձվածային հոմանիշները չափազանց մոտ իմաստ ունեցող դարձվածային միավորներն են, որոնք, որպես կանոն, հարաբերակցվում են միևնույն խոսքի մասի հետ և աչքի են ընկնում մասնակի կամ միևնույն բառադարձվածային կազմով, սակայն տարբերվում են իրարից իմաստային կամ ռճական նրբերանգներով, երբեմն որոշ դարձվածքներում երկու հատկանիշները հանդես են գալիս միասին (Жыков, 1978, էջ 132):

Դարձվածային տարբերակը աչքի է ընկնում նաև այլ տարբերակից հատկանիշով, այն է՝ ենթադրում է առնվազն մեկ անփոփոխակի առկայություն: Անփոփոխակը՝ որպես տարբերակայնության ամենակարևոր հատկանիշ, միևնույն երևույթի վերացարկված նշանակությունն է, միասեռ առարկաներին վերաբերող դասի անվանումը:

Օրինակ՝

1.

ա) Cabeza redonda

բ) Cabeza cuadrada

{ Հիմար, բթամիտ

2.

- | | | |
|-----------------------|---|--------------------------|
| ա) Cabeza de pájaro | } | Դատարկամիտ, դատարկագլուխ |
| բ) Cabeza de jilguero | | |
| գ) Cabeza de gorrión | | |
| դ) Cabeza de chorlito | | |

3.

- | | | |
|-----------------|---|-------|
| ա) Գլուխը թաղել | } | Անեծք |
| բ) Գլուխը հողել | | |

Առաջին երկու օրինակներում “cabeza”-ն է տվյալ անփոփոխակ բաղադրիչը, իսկ հայերեն օրինակում՝ «գլուխ»-ը: Դարձվածային տարբերակներում կարող են հանդիպել նաև մեկից ավելի անփոփոխակներ:

Օրինակ՝

- | | | |
|------------------------------------|---|---------------------------|
| Tener menos cabeza que un canario | } | Լինել հիմար, դատարկագլուխ |
| Tener menos cabeza que un chorlito | | |
| Tener menos cabeza que un codorniz | | |

Չնայած այն փաստին, որ դարձվածային տարբերակները սովորաբար ունեն նույն իմաստը, նույն պատկերը և լեզվում կատարում են նույն գործառույթը, այնուամենայնիվ, շատ հազվադեպ լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում դարձվածային տարբերակներից մեկը կարող է ձեռք բերել նոր իմաստ, որը չի տարածվում այդ շարքին պատկանող մյուս տարբերակների վրա՝ զարկ տալով դարձվածային բազմիմաստությանը:

Օրինակ՝

- | | | |
|------------------|---|---------------------------------|
| Bailar de cabeza | } | Զբաղված լինել, շատ հոգս ունենալ |
| Andar de cabeza | | |

Hablar de cabeza

Tomar de cabeza

Aprender de cabeza

- | | |
|---|---|
| } | Անգիր սովորել, անգիր, հիշելով ասել մի բան |
|---|---|

Իսպաներենում դարձվածային միավորներից որոշները ձեռք են բերել այլ իմաստներ՝ մուտք գործելով բազմիմաստության դաշտ: Իսպաներենում «andar de cabeza» դարձվածային միավորը ձեռք է բերել այլ իմաստ՝ հեռանալով իր նախնական իմաստից և արտահայտում է *ուժասպաս լինել, շարժվել* իմաստը, կամ «hablar de cabeza» դարձվածքը իր երկրորդ նշանակությամբ արտահայտում է *ձնշման ցրակ մի բան խոստովանել* իմաստը: Տվյալ դեպքում դարձվածային տարբերակի մեկ նշանակիչին համապատասխանում են երկու և ավելի նշանակյալներ, մինչդեռ տարբերակայնության

դեպքում մեկ նշանակիչին բացառապես համապատասխանում է մեկ նշանակյալ:

4. Գարծվածային տարբերակի դասակարգման սկզբունքները

Հարկ է նշել, որ տարբերակայնությունը հիմնականում բնորոշ է պատկերավոր դարձվածքներին, թեև շատ հազվադեպ կարելի է հանդիպել նաև ոչ պատկերավոր դարձվածքներում և գրեթե չի դիտարկվում դարձվածային հնարանություններում:

Պ. Բեդիրյանը դարձվածային տարբերակները դասակարգել է յոթ տեսակի՝

ա) Բաղադրիչների հոմանիշներով փոխարինման ճանապարհով,

բ) Բաղադրիչների քերականական տարբեր ձևավորումով,

գ) Կառուցվածքային տարատեսակներով,

դ) Շարահյուսական համաձայնության տարատեսակներով,

ե) Տարբեր շարադասությամբ,

զ) Բաղադրիչների հավելադրումով,

է) Բաղադրիչների համառոտումով (Բեդիրյան, 1973, էջ 214–216):

Սակայն Ա. Նազարյանն առաջադրել է վերջիններիս ավելի համապարփակ դասակարգում՝ առանձնացնելով հետևյալ տարբերակները՝

Կառուցվածքային-քերականական տարբերակներ (ունեն միևնույն բառային կազմը, բայց տարբերվում են իրենց քերականական առանձնահատկություններով):

Այս շարքում առանձնանում են հետևյալ ենթատեսակները.

ա) **Ձևաբանական տարբերակներ:** Այս կարգի տարբերակայնությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝

1. *գոյականական բաղադրիչի եզակի և հոգնակի թվի կիրառությամբ.*

Օրինակ՝ meter cosas en la cabeza a uno/meterle a uno en la cabeza una cosa (մեկի գլուխը մտցնել, մեկին ներշնչել); dar dolores de cabeza/dar un dolor de cabeza (անհանգստություն, գլխացավանք պատճառել); producir dolores de cabeza/producir un dolor de cabeza (անհանգստություն պատճառել, խնդիրներ ստեղծել); traer dolores de cabeza/traer un dolor de cabeza (անհանգստություն պատճառել, խնդիրներ ստեղծել); subirsele a uno los humos a la cabeza/subirsele a uno el humo a la cabeza (ինքն իր մասին մեծ կարծիքի լինել); գլխիդ դիպչի/գլխներիդ դիպչի; գլխի որդը շարժվել/գլխի որդերը շարժվել; գլխին ավելուիա կարդալ/գլխներին ավելուիա կարդալ; գլուխը քամի մտնել/ գլուխը քամիներով լցնել:

2. *հոդի զեղչմամբ.*

Օրինակ՝ գլխովը պտույտ բերել /գլխով պտույտ բերել; գլխին չարը բերել /գլխին չար բերել; գլուխ անցնել/ գլուխը անցնել:

3. փարբեր նախդիրների կիրառությամբ.

Օրինակ՝ precipitarse de cabeza a/precipitarse de cabeza en (ձգտել մի բանի, նետվել մի բանի մեջ); cogerle a uno de los cabezones/cogerle a uno por los cabezones (մեկի վզից բռնել, մեկին ստիպել մի բան անել); meter uno la cabeza en un puchero/meter uno la cabeza por una parte (անստորեն համառել, ցուցաբերել համառություն); dar uno vueltas a la cabeza/ dar uno vueltas en la cabeza (երկար-բարակ մտածել, գլուխ ջարդել մի բանի վրա):

4. հողի եզակի և հոգնակի թվի գործածությամբ.

Օրինակ՝ subírsele a uno el humo a la cabeza/ subírsele a uno los humos a la cabeza (ինքն իր մասին մեծ կարծիքի լինել); dar uno con la cabeza en las paredes/ darse uno con la cabeza contra la pared (գլուխը պատին տալ; գլուխ կոտրել մի բանի հասնելու համար):

բ) **Դիրքային տարբերակներ**, որոնք տարբերվում են գլխավորապես իրենց շարադասությամբ՝ չազդելով բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների վրա: Օրինակ՝ mirar a uno de cabeza a pies/ mirar de pies a cabeza (նոքից-գլուխ նայել); գլխին գայլի ավետարան կարդալ/ գայլի գլխին ավետարան կարդալ; գլխից մինչև նոք-նոքից գլուխ:

Բառային տարբերակներ

Այս խմբին պատկանող դարձվածքները տարբերվում են իրենց բառային կազմով: Փոփոխվող բաղադրիչ կարող են լինել գաղափարանիշ հոմանիշները: Օրինակ՝ tener poca/ mala cabeza (անխոհեմ, անողջամիտ լինել), llenarle a uno la cabeza de aire/ de pájaros/ de viento (մեկին սնել սին, դատարկ երազանքներով), tener uno la cabeza llena de chorlitos/ de grillos/ de musarañas/ de pájaros (ապրել երազներով, երևակայել), estar mal/ malo/ perdido de la cabeza (խելագարվել, խելքը թոցնել), bailar/ andar de cabeza (զբաղված լինել, շատ գործ/զբաղմունք ունենալ անելու); no alzar/ levantar cabeza (ի վիճակի չլինել նեղությունից գլուխ բարձրացնել; հազիվ ծերը-ծերին հասցնել), aprender/ tomar/ hablar de cabeza (անգիր անել), agachar/ doblar/ hincar/ bajar la cabeza (գլուխը կախել անոթից, հանձնվել, հնազանդվել), cabeza de casa/ de linaje/ de familia (տան գլուխը, ղեկավարը); dolerle a uno la cabeza de oír/ saber una cosa (մեկի գլուխը ցավացնել մի բանով, մեկին անընդհատ ասել մի բան); ponerle a uno la cabeza loca/ tonta (ձանձրացնել, մեկի գլուխը տանել); quebrantarle/ quebrarle/ sacudirle la cabeza a uno (հոգնեցնել, զզվացնել, գլուխը տանել); con la cabeza baja/ gacha (գլխահակ, գլուխը կախ, խոնարհ); quebradero/ rompedero de cabeza (գլխացավանք, բարդ առաջադրանք); quebrarse/romperse uno la cabeza (գլուխ ջարդել մի բանի վրա, մտատանջվել); precipitarse/ tirarse de cabeza a/en (ձգտել մի բանի, նետվել մի բանի մեջ); levantar/ sacar uno de su cabeza una cosa (հնարել, հորիսել); tener uno la cabeza llena de humo/ viento (մեծ կարծիքի լինել ինքդ քո մասին); llevar/ traer de los cabezones a uno (ստիպելով բերել); tornar/ volver uno la cabeza a una cosa (հետաքրքրվել մի բանով); գլուխը դառնալ/ շուռ գալ/ պտտվել/ պտույտ գալ; գլխին խոռվ անել/խոռվել/խոռվ լինել; գլխին թուք ու մուր ածել/թա-

փել; գլխին լափ ածել/թափել; գլխին (մի) օյին խաղալ/հանել; գլուխը թափահարել/ թափ տալ; գլխին գարկել/խփել; գլուխը պատին խփել/տալ/գարկել; գլխին խաթա/խաթաբալա բերել; գլխին խաթա դառնալ/լինել; գլխին խաղ խաղալ/ սարքել; գլխին կրակ բերել/դառնալ; գլխին պատիժ/պատուհաս դառնալ; գլխին սև անել/բերել; գլխին ամպեր կուտակվել/հավաքվել; գլխին կակալ/պոպոկ/ընկույզ կոտրել; գլխին հատիկ ձավար/կորեկ/կորկոտ աղալ; գլխին քար/քարակարկուտ աղալ; գլխին չաքուչ/մուրձ բանեցնել/կոտրել/ դառնալ; գլխին հարամ լինել/կենալ; գլխին սուր կախել/ձոձել; գլուխը սրի տակ դնել/լինել; գլուխը աղալ/աղը դնել; գլուխը ողջ լինել /ողջ մնալ/ողջ պահել; գլուխը տանել բերել/տարուբերել/օրորել/շարժել; գլխից բան հանել/հնարել; գլխից ձեռք վերցրած/քաշած; գլխում խելք/միտք մնալ; գլխի ճարը անել/տեսնել; գլխին գդակ դնել/լինել/ունենալ; գլխին ջուր ածել/լցնել/մաղել, գլուխը քաշ անել/գցել/ձգել; գլխին փափալս դնել/տեսնել/ունենալ/ չունենալ; գլուխ-գլխի դնել/տալ; գլխին ավետարան/պատարագ/ ալելուիա/ շարական կարդալ; գլխից թռչել/գնալ; գլխից դուրս ընկնել/գալ/գցել/հանել/մնալ:

Տվյալ խմբին պատկանող դարձվածքների փոփոխվող բաղադրիչները կարող են արտահայտվել նաև տարբեր դերանուններով, և թվականով և այլն: Օրինակ՝ pasarle a uno una cosa por la cabeza/ pasársele a uno una cosa por la cabeza (գլխում նոր միտք ծագել, միտք հղանալ):

Տվյալ դարձվածային տարբերակին պատկանող դարձվածքներում կարող են նաև փոփոխվել մի քանի բաղադրիչ: Օրինակ՝ tener uno la cabeza llena de pájaros/ tener muchos pajaritos en la cabeza (ապրել երագներով, երևակայել); no saber uno dónde dar de cabeza/ no tener dónde volver la cabeza/ no tener una almohada sobre qué reclinar la cabeza (չիմանալ գլուխն ուր խփել, անելանելի վիճակում գտնվել); գլուխը կրակը գցել/ գլուխը գնդանի տակ մտցնել/ գլուխը ցավի տակ դնել:

Ոճական տարբերակներ

Տվյալ խմբին են պատկանում այն դարձվածային միավորները, որոնց փոփոխվող բաղադրիչները ոճական հոմանիշներ են: Օրինակ՝ dar (uno) con la cabeza en un pesebre / dar con la cabeza en el techo (հիմարություններ ասել, անհեթեթություններ անել); cabeza redonda/cuadrada/cabeza huera (հիմար, բթամիտ); cabeza de campanario/ cabeza de tarro (բթամիտ, դատարկագլուխ); գլխից հեռացնել/ գլխից ցանել: Որպես փոփոխվող բաղադրիչ կարող են նաև հանդես գալ այն ոճական հոմանիշները, որոնք պատկանում են լեզվի ոչ գործուն (պասիվ) կամ սահմանափակ գործածություն ունեցող բառերի շերտին, լեզվի հասարակական և տարածական տարբերակներին և այլն: Օրինակ՝ գլխին շան լափ թափել/լցնել/ գլխին շան լափ ածել; գլուխը ժաժ տալ/ գլուխը տարուբերել; գլխին խրատ կարդալ/ գլխին լուր կարդալ; գլուխը փորձանք բերել/ գլուխը գուլում բերել; գլխին ընկույզ/պոպոկ կոտրել/ գլխին կակալ կոտրել; գլխին կորեկ ծեծել/ գլխին կորկոտ ծեծել; գլխին ժողովել/հավաքել/ գլխին կիտել, գլուխը դալմաղալի տակ դնել/ գլուխը

դավադալի տակ ձգել; գլխից մինչև կրունկները/գլխից մինչև գարշապարը; գլուխը մտցնել/լցնել/ գլուխը մխել; գլուխը վեր կալնել/առնել-գլուխը վեր ունել; գլուխը յուղել/գլուխը քոլոզ դնել/ քոլմստել/ գլուխը դլել; գլխին մասալ կարդալ/ գլխին հեքիաթ կարդալ:

Քանակական տարբերակներ

Այս դարձվածային միավորներն աչքի են ընկնում առաջադաս, միջադաս կամ հետադաս մեկ կամ մի քանի բաղադրիչների գեղչմամբ, շատ հազվադեպ նաև որոշ բաղադրիչների ավելացմամբ: Ըստ Պ. Բեդիրյանի՝ տվյալ դարձվածային միավորները կազմվում են բաղադրիչների հավելադրումով կամ գեղչումով (համառոտումով) (Բեդիրյան, 1973, էջ 215): Վերջիններս նույն դարձվածքի ամբողջական կամ կրճատ ձևերն են, որոնք երբեմն որոշ դարձվածաբանների կողմից նույնացվում են դարձվածային հոմանիշի հետ: Օրինակ՝ *írsele a uno la cabeza a pájaros/ írsele a uno la cabeza* (գլխապտույտ ունենալ; գիտակցությունը/ողջամտությունը կորցնել, ուղեղը մթագնել); գլուխ-գլխի դնել/ գլուխ-գլխի (միասին); գլխին շան լափ ածել/թափել/ գլխին լափ թափել/ածել; գլխին հուր ու կայծակ թափել/ գլխին կայծակ թափել; գլխին սառը ջուր մաղել/ գլխին ջուր մաղել: Մեր լեզվանյութում կարելի է առանձնացնել քանակական տարբերակների օրինակներ, որտեղ որոշ բաղադրիչներ ավելանում են. *cabeza a pájaros/cabeza llena de pájaros* (դատարկագլուխ), գլխում խելքի կտոր չլինել / գլխում մի կոպեկի խելք չկա; աստծո կրակը թափվել/ աստծո կրակը գլխին թափվել; գլուխը ցավել/գլուխը ցավի տակ դնել:

Ուղղագրական տարբերակներ

Տվյալ խմբին պատկանող դարձվածային միավորները տարբերվում են միմյանցից իրենց ուղղագրությամբ, որը չի ազդում ո՛չ վերջիններիս կառուցվածքի, ո՛չ էլ իմաստի վրա: Այս տարբերակները գրեթե չեն դիտարկվում իսպաներենի մեր լեզվանյութում, իսկ հայերենում բացահայտվել են մի քանի դեպք: Օրինակ՝ գլուխս ո՞ր քրին/քարովը տամ; գլխին գայլի/գելի ավետարան կարդալ; գլխի/գլխու ցավ: Ըստ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի՝ դարձվածային տարբերակ չի կարելի համարել միևնույն դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչների ուղղագրական և բառային աննշան տարբերությունները, օրինակ՝ գլխին էջի/իջի պատարագ կարդալ; գլխին կրակ թափել/գլխում կրակ թափել; գլուխը մահի/մահու տալ; գլուխը քաշ/քարշ գցել/քցել; գլուխը վայր/վեր բերել:

Դարձվածային տարբերակը բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմի առկայությամբ այս կամ այն բառ-բաղադրիչի քերականական փոփոխակն է, ինչպես նաև դարձվածքի բաղադրիչը հանդիսացող բարբառային և փոխառյալ բառերն ու բառաձևերը գրականով փոխարինելու դեպքերը: Դարձվածային տարբերակ կարող են համարվել այն տեսակները, որոնց բաղադրիչը կամ բաղադրիչներն ունեն քերականական տարբերակ (դարձվածային

միավորի որևէ կոնկրետ բաղադրիչի կիրառություն, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում, երբեմն տվյալ բաղադրիչը կամ բաղադրիչները կարող են հանդես գալ տարբեր հոլովածներում և այլն):

Հայերենում դարձվածային տարբերակ է համարվում նաև արևմտահայերեն տարբերակը արևելահայերենով փոխարինելու դեպքը կամ գրաբարայան քարացած ձևերով կազմված դարձվածքը և վերջինիս ժամանակակից հայերենի համարժեքը, օրինակ՝ գլխի տակ կակուղ/ փափուկ բարձ դնել; գլուխը կապել/ գլուխը պլլել:

Եզրակացություններ

Այսպիսով, ուսումնասիրելով նյութը, կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

Դարձվածային տարբերակները նույն դարձվածքի տարբեր ձևերն են. ունեն նույն կամ մասնակիորեն տարբեր բառային կազմ և արտահայտում են միևնույն իմաստը: Վերջիններս ունեն նույն պատկերն ու լեզվում կատարում են միևնույն գործառնություն:

Դարձվածային հոմանիշները, առաջանալով տարբեր աղբյուրներից, կառուցվում են տարբեր պատկերների հիման վրա, սակայն նույնպես արտահայտում են նույն կամ մոտ իմաստներ՝ տարբերվելով իրենց բառաքերականական կազմով:

Դարձվածքների իմաստային կառուցվածքի համակարգային հարաբերություններն արտացոլող այս երկու տեսակներն էլ ծառայում են լեզվի դարձվածային ֆոնդի հարստացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

- Baghdasarian, H. (2014). Lo universal y lo nacional en las paremias desde una perspectiva interlingual. *Paremia*, 23, էջ 199–208.
- Baghdasarian, H. (2021). Algunas consideraciones sobre la traducción al italiano de las paremias de la novela Rinconete y Cortadillo de Cervantes, *Paremia*, 31, էջ 149–161.
- Casares, J. (1950). *Introducción a la lexicografía moderna*. Madrid: Consejo Superior de Investigaciones Científicas
- Corpas Pastor, G. (1996). *Manual de fraseología española*. Madrid: Gredos
- Estudios lingüísticos en recuerdo del profesor Juan Martínez Marín* (2005). Granada: M^a Ángeles Pastor Milán.
- Varela, F., Kubarth, H. (2004). *Diccionario fraseológico del español moderno*. Madrid: Gredos.
- Zuluaga, A. (1980). *Introducción al estudio de las expresiones fijas*. Fautes: Instituto de Caro y Cuervo.
- Жуков, В. (1978). *Семантика фразеологических оборотов*. М.: Пед-ин-т
- Назарян, А. (1987). *Фразеология современного французского языка*. М.: Высшая школа
- Шанский, Н. (1985). *Фразеология современного русского языка*, 3-е изд., испр. и доп. М.: Просвещение.
- Բաղիկյան, Խ. (1986). *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Երևան, ՄՍՀ ԳԱ:

Բեդիրյան, Պ. Ս. (1973). *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Երևան, Լույս:

Refernces

- Baghdasarián, H. (2014). Lo universal y lo nacional en las paremias desde una perspectiva interlingual [The universal and the national in the paremias from an interlingual perspective]. *Paremia*, 23, ej 199–208. (In Span.)
- Baghdasarián, H. (2021). Algunas consideraciones sobre la traducción al italiano de las paremias de la novela Rinconete y Cortadillo de Cervantes [Some considerations on the translation into Italian of the paremias of the novel Rinconete y Cortadillo by Cervantes], *Paremia*, 31, ej 149–161. (In Span.)
- Casares, J. (1950). *Introducción a la lexicografía moderna* [Introduction to modern lexicography]. Madrid: Consejo Superior de Investigaciones Científicas. (In Span.)
- Corpas Pastor, G. (1996). *Manual de fraseología española* [Manual of Spanish phraseology]. Madrid: Gredos. (In Span.)
- Estudios lingüísticos en recuerdo del profesor Juan Martínez Marín* [Linguistic studies in memory of Professor Juan Martínez Marín] (2005). Granada: M^a Ángeles Pastor Milán. (In Span.)
- Varela, F., Kubarth, H. (2004). *Diccionario fraseológico del español moderno* [Phraseological dictionary of modern Spanish] Madrid: Gredos. (In Span.)
- Zuluaga, A. (1980). *Introducción al estudio de las expresiones fijas* [Introduction to the study of fixed expressions]. Fautes: Instituto de Caro y Cuervo. (In Span.)
- Zhukov, V. (1978). *Semantika frazeologicheskikh oborotov* [Semantics of phraseological units]. M.: Ped-in-t. (In Russ.)
- Nazaryan A. (1987). *Frazeologiya sovremennogo frantsuzskogo yazika* [Phraseology of modern French language]. M.: Visshaya shkola. (In Russ.)
- Shanskiy, N. (1985). *Frazeologiya sovremennogo russkogo yazika* [Phraseology of modern Russian], 3-e izd., ispr. i dop. M.: Prosveshchenie. (In Russ.)
- Badikyan, Kh. (1986). *Zhamanakacic hayereni dardzvatsayin miavorneri* [Phrasal units of modern Armenian], Yerevan, SSHGA. (In Arm.)
- Bediryan, P. S. (1973). *Zhamanakacic hayereni dardzvatsabanutyun* [Phraseology of modern Armenian], Yerevan, Luys. (In Arm.)

Анна Кубанян

*Преподаватель кафедры романской филологии факультета Европейских
Языков и Коммуникации Ереванского государственного университета,
кандидат филологических наук, доцент
Эл. адрес: annakubanian@ysu.am*

**Օ ՍՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԻԱՏԻՎՆՈՒԹՅԱՆ ՖՐԱՅԵՈԼՈԳԻԿԵՍԻ ԵԴԻՆԻՑ Ը
ԿՈՄՍԵՆՏՈՄ «ԴՈՒՍԱ»
(ԻՍՓԱՆՏԿՈ–ԱՐՄՅԱՆՏԻԿ ԸՎԱՆԻՏԵԼՆԻԿ ԱՆԱԼԻԶ)**

Данная статья посвящена изучению научных подходов, относящихся к восприятию и классификации фразеологизмов, которые служат теоретической базой для данной статьи, изучает фразеологические трансформации фразеологизмов с компонентом «голова» в испанском языке в сопоставлении с армянским, анализирует системные связи вариативности и синонимичности фразеологических единиц с вышеуказанными компонентами в испанском и армянском языках и осуществляет всесторонний анализ фразеологических единиц с этим компонентом на уровне языка выявляя сходства и различия фразеологической вариации между этими двумя языками. Благодаря систематическому соотношению вышеуказанные фразеологические единицы придают контексту эмоциональную выразительность. Данная работа является актуальной, поскольку впервые был проведен сопоставительный анализ фразеологических единиц с компонентом «голова» выявляя сходства и различия между этими двумя языками.

Ключевые слова: фразеологическая единица, фразеологическая вариация, синонимия, полисемия, окказиональная трансформация, фразеологический вариант.

Anna Kubanyan

*Lecturer of The Romance Philology Department of the Faculty of
European Languages and Communication at Yerevan State University
Ph.D. in Philology, Associate Professor
Email: annakubanian@ysu.am*

**THE PROBLEM OF VARIATION OF PHRASEOLOGICAL UNITS WITH
THE COMPONENT «HEAD»
(COMPARATIVE ANALYSIS OF SPANISH AND ARMENIAN)**

The present article focuses on the scientific approaches related to the principles of classification and perception of phraseological units that serve as a theoretical base for the study of this paper. It studies the phraseological transformations of phraseological units with the component «head» called variations, emphasizes the systematic correlation of variation and synonymy of phraseological units with

the above-mentioned component in Spanish and Armenian and carries out a thorough analysis of phraseological units with this component on the level of language, uncovering the similarities and differences of phraseological variations between these two languages. By virtue of the systematic correlation of phraseological units with the component «head» the above-mentioned phraseological units convey expressiveness and emotionality to the text. The article is up-to-date, as it's the first time that has been carried out a contrastive analysis of phraseological units with the component «head» uncovering the similarities and differences between these two languages.

Key words: phraseological unit, phraseological variation, synonymy, polysemy, occasional transformation, phraseological variant.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. մայիսի 10-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. մայիսի 16-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. հունիսի 11-ին: